ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 56
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքը (Վարդահովիտ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Եղեգիս համայնքի (Վարդահովիտ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքը (Վարդահովիտ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Վայոց ձոր-5 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգի համայնքի (Վարդահովիտ բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
10-041-0201-0231 կադաստրային ծածկագրով 0.0213 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր	10-041-0201-0231 կադաստրային ծածկագրով 0.0213 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Եղեգիս համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի Վարդահովիտ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի (Վարդահովիտ բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «17» «մարտի» 2023 թ.